



# ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 1 (6)

2009թ. հունվար – մարտ



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ԱԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Հայաստանի 80 համայնքներում եւ նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում է իր անհատական համայնքների կողմից նախաձեռնվող եւ իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից եւ ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ ողորդ կազմակերպությունների կողմից:

**Վերապահում.** սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ Կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները եւ կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

## «Երեւանը 5 օրում»

### Երիտասարդների քաղաքացիական կրթության ծրագիր

Մարտի 23-27-ը ԵՅԳԾ շրջանակներում կազմակերպվեց եւ իրականացվեց չորրորդ ամենամյա «Երեւանը 5 օրում» երիտասարդների քաղաքացիական կրթության ծրագիրը: Հայաստանի 10 մարզերում գործող ԵԳԱ-ները ներկայացնող 37 երիտասարդներ ժամանել էին Երեւան՝ այցելելու տարբեր պետական կառույցներ եւ տեղեկանալու, թե ինչպես են դրանք գործում համուն պետության առաջընթացի: Ծրագրի նպատակն էր Հայաստանի համայնքներում բնակվող երիտասարդներին հնարավորություն տալ ավելի մտալից ծանոթանալու պետական կառույցների աշխատանքներին եւ հարստացնելու գիտելիքները իրենց՝ որպես ժողովրդավարական պետության քաղաքացիների, իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ: Ծրագրի մասնակիցները շրջեցին մի շարք հաստատություններով եւ հանդիպումներ ունեցան ՀՀ նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի, Կառավարության, Վճռաբեկ եւ ընդհանուր իրավասության դատարանների, «Արմենպրես» լրատվական գործակալության, Սպորտի եւ երիտասարդության հարցերով, ինչպես նաեւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերով նախարարությունների ներկայացուցիչների հետ: Այս տարի ծրագրի մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց հանդիպել նաեւ Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան պրն. Ջոնսեֆ Փեննինգթոնի հետ եւ

հարստացնել իրենց գիտելիքները ԱՄՆ-ում երիտասարդական քաղաքացիական ակտիվության մասին, ինչպես նաեւ տեղեկություններ ստանալ ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանին հատկացվող աջակցության վերաբերյալ: Երիտասարդները մասնակցեցին նաեւ քաղաքացիական հասարակության վերաբերյալ ինտերակտիվ սեմինար-հանդիպումների եւ հարստացրեցին իրենց գիտելիքները ընտրությունների, տեղական ինքնակառավարման համակարգի, հակակոռուպցիոն նախաձեռնությունների եւ ժողովրդավարության համատեքստում ազատ լրատվամիջոցների դերի մասին: Մասնակիցները նաեւ հնարավորություն ունեցան միմյանց հետ փոխանակել գաղափարներ եւ

իրենց համայնքներում իրականացված գործունեության մասին տեղեկություններ, ինչը նպաստի ԵՅԳԾ համայնքների եւ քաղաքացիականորեն ակտիվ երիտասարդների ցանցի հզորացմանը:

37 ԵԳԱ-ների ներկայացուցիչները հարստացրեցին իրենց գիտելիքները Հայաստանում տեղական ինքնակառավարման եւ պետական կառավարման, քաղաքացիության, ժողովրդավարության ներքո քաղաքացու իրավունքների եւ պարտականությունների վերաբերյալ, ծանոթացան Հայաստանի դատական համակարգին, ինչպես նաեւ Կառավարության եւ Ազգային ժողովի առջեւ ծառայած ներքին եւ արտաքին հարցերի վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր տեսակետներին:



«Երեւանը 5 օրում» ծրագրի մասնակիցների հանդիպումը Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան պրն. Ջոնսեֆ Փեննինգթոնի հետ

## Հայկաժողում վերջապես կլուծվի ջրի խնդիրը

Երկու տարի շարունակ Հայկաժողի ՀԳՀ անդամները մտահոգված էին գյուղում խնեւելու ջրի խնդրով եւ փորձում էին գտնել դրա լուծման տարբերակներ: Խնդիրը կայանում էր նրանում, որ սահմանափակ գյուղի միակ ջրատարը գտնվում է ՀՀ սահմանագծից դուրս՝ Թուրքիայի եւ Հայաստանի սահմանների միջեւ ընկած նեյտրալ գոտում: Ջուրը գյուղ է հասնում միայն մոլիցների օգնությամբ, ինչը շատ ծախսատար է համարվել համար: 2007թ-ին, երբ մաշվածության պատճառով շարքից դուրս եկավ ջրամղիչները մեկը, ՀԳՀ-ն դիմեց տարբեր կազմակերպությունների եւ կարողացավ հայթայթել գումար մոր

ջրամղիչի ձեռքբերման եւ տեղադրման համար: 2008թ-ին, երբ վնասվեց ջրատարը, ՀԳՀ անդամները կրկին դիմեցին մի շարք կազմակերպությունների՝ աջակցություն խնդրելով ջրատարի վերանորոգման համար, եւ ձեռքբերված միջոցներով մորոզեցին խողովակը: Սակայն ջրամղիչների գործարկման հետ կապված մեծ ծախսերի պատճառով ջրամատակարարումը գյուղում կանոնավոր չէր: Որպես խնդրի լուծում ՀԳՀ-ն եւ համայնքի այլ բնակիչները տեսնում էին ՀՀ սահմանագծից ներս հորատանցքի փորումը, ինչի համար անհրաժեշտ էին բավականին մեծ ֆինանսական միջոցներ: 2009թ-ի սկզբին ՀԳՀ-ի նա-

խաձեռնությամբ դիմում կազմվեց եւ ուղարկվեց ՀՀ Ազգային ժողով (ԱԺ)՝ հայցելով աջակցություն գյուղի տարածքում հորատանցքի փորման համար: Մարտին ԱԺ համապատասխան հանձնաժողովում քննարկվել է այդ հարցը եւ որոշվել է միջոցներ տրամադրել Հայկաժողի տարածքում հորատանցքի փորման համար: ՀԳՀ-ն ստացել է իրենց դիմումի պատասխանը, որտեղ նշված է, որ ԱԺ որոշմամբ հորատանցքի փորման համար ս.թ. մայիսին կհատկացվի համապատասխան ֆինանսավորում: ՀԳՀ-ն եւ համայնքի այլ անդամները ոգեւորված են այդ հաջողությամբ, քանզի վերջապես համայնքում կլուծվի ջրի խնդիրը:

### Այս համարում նաեւ

- Աշտուվանի ՀԳՀ-ն խթանում է էլեկտրոնային կառավարման հնարավորությունների օգտագործումը՝ համայնքի խնդիրները բարձրացնելու եւ լուծելու համար 2
- Կոտայքի ՀԳՀ-ն բացահայտում է համայնքի կարիքները՝ գործունեության ընթացքում հասցեագրելու նպատակով 2
- Տեղեկատվության ազատության մասին իրազեկության բարձրացում Կոտայքում 2
- Ծովագարի ՀԳՀ-ն գործում է՝ խթանելու տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականությունը եւ թափանցիկությունը 3
- Քաղաքացիական ակտիվություն Վայոց Ձորում. Բարձրունի, Արենի, Դեղիեր 3
- Ունչալարի ՀԳՀ համագործակցությունը Հայաստանի կյանքում առողջապահական կենտրոնի հետ. անվճար բուժսպասարկում համայնքի կանանց համար 4
- ԵՅԳԾ համայնքների համագործակցության ներքո իրականացված գործունեություն 4

**ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ**

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 37 ակումբ եւ Համայնքի գործունեության 43 հանձնաժողով
- Ամենափոքր համայնքը 2նովաշենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202\* բնակիչ
- Անցած չորս տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 2,000 կամավոր եւ իրականացվել է ավելի քան 1,200 քաղաքացիական նախաձեռնություն

\*2001թ. մարդահամար, <http://www.armstat.am>

## Աշտավանի ՉԳՅ-ն խթանում է էլեկտրոնային կառավարման հնարավորությունների օգտագործումը՝ համայնքի խնդիրները բարձրացնելու և լուծելու համար

Հունվար ամսին Աշտավանի ՉԳՅ-ն (Սյունիքի մարզ) կազմակերպեց «էլեկտրոնային կառավարում» թեմայով սեմինար՝ համայնքի բնակիչներին տեղեկացնելու էլ. կառավարման հնարավորությունների մասին և խթանելու էլեկտրոնային նամակների կիրառումը զանազան կազմակերպություններ և պետական կառույցներ դիմելու համար: Սեմինարը վարելու նպատակով ՉԳՅ-ն հրավիրել էր «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ-ի ներկայացուցիչ Լիլիթ Սկրտչյանին: Սեմինարի անցկացման վերաբերյալ համաձայնություն ձեռքբերելուց հետո ՉԳՅ-ն գյուղում փակցրեց հայտարարություններ՝ համայնքի բնակիչներին հրավիրելով մասնակցելու սեմինարին և քննարկելու համայնքի խնդիրները: Հունվարի 22-ին ՉԳՅ անդամները և համայնքի՝ թեմայով հետաքրքրված այլ բնակիչներ հավաքվել էին մասնակցելու սեմինարին: Լ. Սկրտչյանը մասնակիցներին համագնահատեց մերկայացրեց էլ. կառավարման հնարավորությունները և տրամադրեց պետական կառույցների և այլ կազմակեր-

պությունների ինտերնետային կայքերի հասցեներ, որտեղ կարելի էր գտնել տեղեկատվություն դրանց կառուցվածքի և գործառնությունների մասին և կապ հաստատել այդ կառույցների հետ՝ հղելով նրանց իրենց հուզող հարցերը: Սեմինարի ավարտին մասնակիցները պատրաստեցին և համապարտասխան կառույցներ ուղարկեցին էլ. նամակներ՝ բարձրացնելով համայնքում առկա հիմնախնդիրները: Բարձրացված առաջնահերթ հարցերից մեկն էր Աշտավանում և հարևան համայնքներում բժշկի բացակայության պատճառով բուժասարկման անբավարար վիճակը: Սեմինարի մասնակիցներն իրենց նամակներում առաջարկել էին Աշտավանի և հարեվան 6 գյուղերի բնակիչներին բուժօժանայությունների տրամադրման նպատակով հատկացնել բժշկի հաստիք: Նամակը էլ. տարբերակով ՀՀ Առողջապահության մախարարություն ուղարկելուց հետո որոշ ժամանակ անց ՉԳՅ-ն իրենց հայցին ստացավ դրական պատասխան: Փետրվարին նշանակվեց բժիշկ,



«էլեկտրոնային կառավարում» թեմայով սեմինար՝ կազմակերպված Աշտավանի ՉԳՅ-ի կողմից (Սյունիքի մարզ)

որը կաշխատի Աշտավանի ամբուլատորիայում և կսպասարկի Աշտավանի և հարևան 6 համայնքների բնակչությանը: Ոգևորված իրենց հաջողությամբ՝ համայնքի բնակիչները վճռակամորեն են տրամադրված շարունակելու օգտագործել էլ. կառավարման հնար-

ավորությունները համայնքի խնդիրների բարձրացման և լուծման համար, և հուսով են, որ շուտով կստանան նաեւ այլ կառույցներին ուղարկված՝ համայնքի կարևոր հարցերի և խնդիրների վերաբերյալ իրենց նամակների պատասխանները:

## Կոտայքի ՉԳՅ-ն բացահայտում է համայնքի կարիքները՝ գործունեության ընթացքում հասցեագրելու նպատակով

Հունվարին Կոտայքի ՉԳՅ-ն (Կոտայքի մարզ) կազմակերպեց և իրականացրեց համայնքի կարիքների հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել համայնքի՝ տարբեր տարիքային խմբերի ներկայացուցիչների առաջնահերթությունները՝ դրանք ՉԳՅ գործունեության ընթացքում հասցեագրելու միտումով: Հարցման արդյունքում ՉԳՅ-ն պարզեց, որ համայնքի երիտասարդությունն առաջնահերթ է համարում գյուղում սպորտային համալիրի ստեղծումը, համակարգչային կենտրոնի հիմնադրումը, ինտերնետ կապի անցկացումը, Մշակույթի տան վերանորոգումը և համայնքում

մշակութային կյանքի զարգացումը: Իսկ տարիքով ավելի մեծ բնակիչների կողմից սահմանված առաջնահերթությունների թվում էին սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումը (կենսաթոշակներ, նպաստներ և այլն), կոյուղու կառուցումը, ճանապարհների ճորտգումը, ոռոգման ջրի համակարգի անցկացումը և գյուղի բարեկարգումն ու կանաչապատումը: Հիմնվելով հարցման արդյունքների վրա՝ ՉԳՅ անդամները կազմեցին համայնքի առաջնահերթությունների և հիմնախնդիրների ցանկը և հանդիպեցին գյուղապետի հետ՝ քննարկելու դրանց լուծման

հնարավոր ուղիները: Քննարկման ընթացքում պարզ դարձավ, որ բարձրացված խնդիրներից շատերն ունեն իրատեսական լուծումներ: ՀԳՅ անդամներն, այնուհետև, մշակեցին աշխատանքային պլան՝ համայնքի առաջնահերթությունները հասցեագրելու նպատակով: Նրանք համոզված են, որ համայնքի բնակիչների և ղեկավարների հետ համագործակցության արդյունքում, որոշակի ժամանակ անց, իրենց կհաջողվի լուծել համայնքի շատ խնդիրներ:

### Համայնքի առաջնահերթությունները՝

- ⇒ *Սպորտային համալիրի ստեղծում*
- ⇒ *Համակարգչային կենտրոնի հիմնադրում*
- ⇒ *Ինտերնետ կապի անցկացում*
- ⇒ *Մշակույթի տան վերանորոգում և մշակութային կյանքի զարգացում*
- ⇒ *Սոցիալական ապահովության մակարդակի բարձրացում*
- ⇒ *Կոյուղու կառուցում*
- ⇒ *Ճանապարհների ճորտգում*
- ⇒ *Ոռոգման ջրի համակարգի կառուցում*
- ⇒ *Գյուղի բարեկարգում, կանաչապատում*

## Տեղեկատվության ազատության մասին իրազեկության բարձրացում Կոտայքում

Տեղեկատվություն ստանալու իրավունքի մասին մարզում իրազեկության բարձրացման նպատակով, փետրվարին, Կոտայքի մարզի ԵԿԱ-ները և ՉԳՅ-ները համագործակցել են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» (ԻԱԿ) հասարակական կազմակերպության հետ՝ Կոտայք համայնքում կազմակերպելու սեմինար՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ: Սեմինարին, որը տեղի ունեցավ փետրվարի 17-ին, մասնակցեցին Կոտայք համայնքի բնակիչներ և Կոտայքի մարզում գործող ԵՅԳԾ քաղաքացիական ակտիվ խմբերի

ներկայացուցիչներ: Սեմինարը վարեցին ԻԱԿ ներկայացուցիչներ Մարինե Հակոբյանը և Անահիտ Քոչարյանը: Հանդիպման ընթացքում մասնակիցները քննարկեցին «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը և պատասխաններ ստացան քաղաքացիների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի և տեղեկատվության ստացման ընթացակարգերի հետ կապված իրենց հուզող բազմաթիվ հարցերի: Մասնակիցները նաեւ տեղեկացան այն մասին, որ համայնքներում մարդաշատ վայրերում, պետք է տեղադրվեն տեղեկատվական ցուցատախտակներ,

որոնց վրա պետք է փակցվեն համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներն ու համայնքի բնակիչների համար այլ կարևոր տեղեկատվություն՝ ներառյալ համայնքի բյուջեի նախագիծը, կատարողականը և այլ փաստաթղթեր: Քանի որ սեմինարին ներկա էին նաեւ Կոտայքի գյուղապետարանի ներկայացուցիչներ, տեղի ունեցավ հետաքրքիր քննարկում-քննադատ գյուղապետարանի գործունեության թափանցիկության և համայնքի բնակիչների համար համայնքի ղեկավարների որոշումների, համայնքի բյուջեի և համայնքի համար այլ կարևոր հարցերի

վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու կարևորության վերաբերյալ: Սեմինարի ընթացքում մասնակիցները ստացան նաեւ թեմային վերաբերող տեղեկատվական նյութեր, որոնք կփոխանցեն իրենց համայնքների անդամներին:





# Ծովագարդի ՉԳՅ-ն գործում է՝ խթանելու տեղական իշխանությունների հաշվետվողականությունը և թափանցիկությունը

Ծովագարդի ՉԳՅ-ն (Գեղարքունիքի մարզ) իր գործունեության ընթացքում պարբերաբար իրականացրել է տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքների թափանցիկության և համայնքի բյուջեի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարելավմանն ուղղված նախաձեռնություններ: 2008թ. ընթացքում ՉԳՅ-ն կազմակերպել է համայնքի բյուջեի բազմաթիվ քննարկումներ և համայնքի բնակիչների շրջանում տարածել է ծանուցագրեր՝ նրանց հիշեցնելու բյուջեի համալրման համար հարկերի վճարման կարևորությունը մասին: ՉԳՅ անդամները նաև բազմացրել են համայնքում տարածել են բյուջեի օրինակները: Շարունակելով տեղական իշխանությունների հաշվետվողականության և թափանցիկության խթանման աշխատանքները՝ 2009թ. փետրվարին ՉԳՅ-ն հանդես է եկել առաջարկով, որ համայնքի ավագանու հերթական նիստն անցկացվի ՉԳՅ գործունեության կենտրոնում, որ-

տեղ հնարավոր կլինի մասնակցելու հրավիրել թվով ավելի շատ համայնքի բնակիչների: ՉԳՅ-ի առաջարկն ընդունվել է ավագանու կողմից, և ս.թ. փետրվարի 16-ին ՉԳՅ գործունեության կենտրոնում կայացել է ավագանու արտագնա նիստ, որին հրավիրված էին համայնքի բնակիչներ, այդ թվում նաև բազմաթիվ երիտասարդներ: Նիստի ընթացքում ավագանու անդամները քննարկեցին 2008թ. բյուջեի կատարման հետ կապված հարցեր, ինչպես նաև՝ 2009թ-ի բյուջեն: Երիտասարդները հնարավորություն ունեցան համայնքի ղեկավարներին հղել իրենց հուզված հարցերը և ստանալ սպառնալից պատասխաններ: Հաշվի առնելով այն, որ նման հանդիպումը չէր ունեցել իր նախադեպը մարզի համայնքներում՝ Գավառի տարածքում գործող «Քյավառ» հեռուստարձկերությունը ներկա գտնվեց նիստին՝ իր լրատվական ծրագրում այն լուսաբանելու նպատակով: Հեռուստարձկերությանը տված հարցազրույցներում երիտասարդներից շատերը



Ավագանու արտագնա նիստ Ծովագարդի ՉԳՅ (Գեղարքունիքի մարզ) կենտրոնում՝ կազմակերպված ՉԳՅ նախաձեռնությանը

նշել էին, որ նիստը հետաքրքիր էր և տեղեկատվական: Նրանք շեշտել էին համայնքի բյուջեի կազմման մեխանիզմներին և 2009թ-ին իրականացվելիք ծրագրերին տեղյակ լինելու կարեւորությունը: Երիտասարդները նաև նշել էին, որ ՉԳՅ-ի այդ նա-

խաձեռնությունը կնպաստի հաստատված ծրագրերի իրականացման նկատմամբ համայնքի ղեկավարների պատասխանատվության բարձրացմանը և կխթանի տեղական իշխանությունների հաշվետվողականությունն ու գործունեության թափանցիկությունը:

## Քաղաքացիական ակտիվություն Վայոց Ձորում. Բարձրունի, Արենի, Հերիեր

◆ Սահմանամերձ Բարձրունի համայնքի խնդիրները լսելի դարձնելու և իշխանությունների ուշադրությունը դրանց վրա գրավելու նպատակով, փետրվարին, Բարձրունու ՉԳՅ-ն գյուղ էր հրավիրել Հայաստանի 1-ին հանրային հեռուստարձկերության Վայոց ձորի թղթակից Նանե Բագրատունու և առաջարկել ռեպորտաժ պատրաստել իրենց գյուղի մասին: Ընդունելով ՉԳՅ հրավերը՝ փետրվարի 24-ին Ն. Բագրատունին այցելեց Բարձրունի գյուղ, որտեղ ՉԳՅ անդամները նրան ծանոթացրեցին գյուղի պատմությանը և սեսարժան վայրերին, պատմեցին գյուղում առկա խնդիրների մասին, ինչպես նաև առաջարկեցին դիտել ՉԳՅ անդամ Բելլա Մուրադյանի կողմից գյուղի մասին պատրաստված տեսաֆիլմը: Նույն օրը ՉԳՅ անդամները կազմակերպեցին «Բավարարում է արդյոք մեզ «ՉԳՅ» հանրային հեռուստարձկերությունը» թեմայով բանավեճ, որին մասնակցելու էին հրավիրել նաև Ն. Բագրատունուն: Փաստելով հեռուստարձկերության կողմից վերջին տարիներին ունեցած առաջընթացը՝ համայնքի բնակիչները նաև արտահայտեցին իրենց դժգոհությունը հեռարձակվող որոշ ծրագրերից. շատերը նշեցին, որ հեռուստարձկերությունը հեռարձակում է ցածրաճակատի մշակութային և երաժշտական հաղորդումներ ու սերիալներ, և շատ քիչ է եթեր հատկացնում օրինակ՝ Բարձրունու պես սահմանամերձ, հեռավոր, կամ ՀՀ այլ գյուղական համայնքների և դրանց հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության տրամադրմանը: Օգտվելով առիթից՝ համայնքի

բնակիչները «ՉԳՅ»-ի թղթակցին ներկայացրեցին համայնքի խնդիրները, որոնցից էին երիտասարդ ընտանիքների դիմաց ծառայած՝ բնակարանի խնդիրը, խմելու ջրի ներքին ցանցի մաշվածությունը, ներհամայնքային ճանապարհների վատ վիճակը, գրադարանում գրքերի պակասը, ինտերնետ կապի բացակայությունը, համայնքում կրթական ու մշակութային հնարավորությունների պակասը, և այլն: Նանե Բագրատունին համայնքի բնակիչներին խոստացավ, որ ինքը հեռուստարձկերությանը կփոխանցի բանավեճի ընթացքում հնչած հարցերն ու քննադատությունը և մայիս ամսին կրկին կայցելի գյուղ՝ Բարձրունու մասին հատուկ ռեպորտաժ պատրաստելու նպատակով:

◆ Կարելու համարելով համայնքի բնակիչների շրջանում իրավական հարցերի վերաբերյալ իրազեկության բարձրացումը, մարտին, Արենիի ՉԳՅ-ն կազմակերպել էր համայնքի բնակիչների հանդիպումը Վայոց ձորի Հանրային պաշտպան Սիիրան Խանամիրյանի հետ: Հանդիպումը տեղի ունեցավ մարտի 19-ին՝ համայնքի Մշակույթի տանը: Հանդիպման սկզբում ՉԳՅ նախագահ Աննա Ղազարյանը մասնակիցներին ներկայացրեց հանդիպման նպատակը և շեշտեց սեփական իրավունքների իմացության կարեւորությունը դրանց կիրառման և պաշտպանման համար: Այնուհետև, Մ. Խանամիրյանը մասնակիցներին ներկայացրեց Հանրային պաշտպանի գրասենյակի գործառնությունները և հիմնական նպատակը, որն է՝ սոցիալապես անապահով քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը: Հանդիպման ընթացքում համայնքի

բնակիչները բազմաթիվ հարցեր ուղղեցին խոսնակին և ստացան դրանց սպառնալից պատասխանները: Համայնքի անդամներին հուզող հարցերից էին սեփականատիրության, ժառանգության, ամուսնալուծության, սոցիալական ապահովության, ոստիկանությունում քննության ժամանակ պաշտպան ունենալու և այլ իրավունքները:

◆ Մտահոգված լինելով գյուղից բնակիչների՝ հատկապես երիտասարդների արտագաղթի խնդրով, հունվարին, Հերիերի ԵԳԱ-ն կազմակերպեց բանավեճ՝ «Մնալ և ապրել գյուղում, թե՞ մեկնել քաղաք» թեմայով: Բանավեճի սկզբին մասնակիցներն ընտրեցին բանավեճը վարող և բաժանվեցին երկու խմբի՝ ըստ հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշման: Առաջին խմբի անդամները կողմ էին գյուղից հեռանալուն: Նրանց հիմնական փաստարկերից էին գյուղում աշխատատեղերի բացակայությունը, ինչպես նաև կրթական հնարավորությունների բացակայությունը: Գյուղում

մնալու կողմ խմբի անդամներն իրենց դիրքորոշումը հիմնավորում էին նրանով, որ քաղաքներում ես մեծ է գործազրկության ցուցանիշը և գյուղացու համար շատ դժվար է աշխատանք գտնել, մինչդեռ գյուղում կարելի է զբաղվել հողագործությամբ և գոնե այդպես լուծել օրվա հացի խնդիրը: Այս խմբի անդամներն ընդունում էին, որ գյուղում կյանքն ունի իր դժվարությունները, սակայն նրանց կարծիքով՝ հարցի լուծումը կլինի աշխատել այդ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ և վերացնել դրանք, այլ ոչ թե հեռանալ գյուղից: Բանավեճը երիտասարդներին օգնեց վերանայել գյուղում ապրելու առավելությունները և թերությունները և հստակեցնել իրենց դիրքորոշումը հարցի վերաբերյալ, ինչպես նաև օգնեց գիտակցել իրենց ջանքերը միավորելու և գյուղում առկա խնդիրները լուծելու կարևորությունը, ինչի արդյունքում գյուղում կյանքը կդառնա ավելի բարեկեցիկ ու գրավիչ երիտասարդների համար:



«Մնալ և ապրել գյուղում, թե՞ մեկնել քաղաք» թեմայով բանավեճ՝ կազմակերպված Հերիերի ԵԳԱ-ի նախաձեռնությանը



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE

**Կրթությանը զարգացման ակադեմիա**  
Լյպեճոր 10,  
0019 Երևան  
Հայաստանի Հանրապետություն  
Հեռ.՝ (374 10) 225 636  
Ֆաքս՝ (374 10) 275 686  
Էլ փոստ՝ ycap@aed.am

**Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր**



Academy for Educational Development

**Մեր ուսուկայքերն են՝**  
<http://ycap.am>  
<http://aed.am>

## Ռանչպարի ՀԳՀ համագործակցությունը Հայ - ամերիկյան առողջապահական կենտրոնի հետ. անվճար բուժասպարկում համայնքի կանանց համար

Մարտին Ռանչպարի ՀԳՀ-ն (Արարատի մարզ) հրավիրել էր Հայ-ամերիկյան առողջապահական կենտրոնի մասնագետներին՝ համայնքի կանանց անվճար բուժառաջարկություններ տրամադրելու խնդրանքով: Համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերելով կենտրոնի ներկայացուցիչների հետ, ՀԳՀ անդամները գյուղում ու հարեւան համայնքներում տարածեցին հայտարարություններ՝ կանանց հրավիրելով օգտվել անվճար հետազոտության հնարավորությունից: Նշանակված օրը կենտրոնի մասնագետները ժամանել էին Ռանչպար՝ իրենց հետ բերելով հետազոտությունների համար անհրաժեշտ սարքավորումներ: Այդ օրը Հայ-ամերիկյան կենտրոնի մասնագետների կողմից անվճար հետազոտվեցին ընդհանուր թվով 83 կին՝ Ռանչպար եւ հարեւան Սիս եւ Նորամարզ գյուղերից: Համայնքի բնակիչները շնորհակալ էին ՀԳՀ-ին այդ կարևոր նախաձեռնության համար: ՀԳՀ միջնորդությամբ կազմակերպված այդ ակցիան լուսաբանվել է նաեւ տեղական մամուլում:



Անվճար բուժասպարկման տրամադրում Հայ-ամերիկյան առողջապահական կենտրոնի մասնագետների կողմից

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորված հնգամյա ծրագիր է, որը իրականացվում է Կրթությանը զարգացման ակադեմիայի (ԿԶԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է **ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարևորությունը:**

**Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.**

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմամբ զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտություններ, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

## ԵՀԳԾ համայնքների համագործակցության ներքո իրականացված գործունեություն

ԵՀԳԾ համայնքների համագործակցության նախաձեռնության շրջանակներում ՀԳՀ հանձնաժողովը եւ մարզային ենթահանձնաժողովներն ակտիվորեն ներգրավված են եղել համայնքային եւ մարզային մակարդակներում առկա խնդիրների լուծման նպատակով տարբեր նախաձեռնությունների պլանավորման եւ իրականացման գործում:

◆ Լոռու մարզային ենթահանձնաժողովը՝ մարզի գյուղական համայնքներում բժիշկների պակասի եւ բուժասպասարկման անբավարար մակարդակի խնդիրը հասցեագրելու նպատակով մարզի՝ ԵՀԳԾ բոլոր 8 համայնքներում նախաձեռնել է իրականացնել է ստորագրահավաք: Արդյունքում յուրաքանչյուր գյուղից հավաքվել է 70-150 ստորագրություն՝ սատարելու ենթահանձնաժողովի կողմից պատրաստված եւ ՀՀ Առողջապահության նախարարությանը (ԱՆ) հասցեագրված մամակը, որտեղ նկարագրվում է մարզի գյուղական համայնքներում բուժասպասարկման վիճակը եւ հայցվում է նախարարության անջակցությունը Լոռու մարզի գյուղերը մեղ մասնագետ-բժիշկների այցեր կազմակերպելու հարցում: Մարտին ենթահանձնաժողովի անդամների հետ կապ եւ հաստատել ԱՆ ներկայացուցիչները եւ ճշտել են հայրի հետ կապված որոշ մանրամասներ, այնուհետեւ, մարզային ենթահանձնաժողովին տեղեկացրել են, որ հայրը կհղվի Լոռու մարզպետարանի Առողջապահության բաժնին, որտեղից կկապվեն ենթահանձնաժողովի անդամների հետ եւ կհամագործակցեն մարզի գյուղերը մեղ մասնագետ-բժիշկների այցեր կազմակերպելու համար: Ներկայումս Լոռու մարզային ենթահանձնաժողովը սպասում է մարզպետարանի Առողջապահության բաժնի ներկայացուցիչների արձագանքին եւ պատրաստ է նրանց հետ համագործակցել մարզի գյուղական համայնքների բնակչությանը համապատասխան բուժառաջարկություններ տրամադրելու նպատակով մասնագետների այցեր կազմակերպելու գործում:

◆ Վայոց ձորի մարզային ենթահանձնաժողովը նախաձեռնել է իրականացնել է մարզի դպրոցների հիմնախնդիրների բացահայտմանն ուղղված հետազոտություն: Արդյունքում բացահայտված ընդհանուր խնդիրներից էին դպրոցներում խմելու ջրի բացակայությունը, ճաշարանի, սանհանգույցի բացակայությունը, ջեռուցման խնդիրը, որոշ առարկաների գծով ուսուցիչների պակասը, եւ այլն: Հարցման արդյունքներն արդեն ամփոփվել են: Ենթահանձնաժողովի անդամները ներկայումս համագործակցում են Վայոց ձորի մարզպետարանի Կրթության, մշակույթի եւ սպորտի, ինչպես նաեւ Տարածքային կառավարման վարչությունների ներկայացուցիչների հետ՝ մարզային մակարդակով կազմակերպելու համայնքային քննարկում՝ համայնքապետերի, դպրոցների տնօրենների եւ այլ հետաքրքրված անձանց մասնակցությամբ՝ բացահայտված խնդիրները քննարկելու եւ դրանց լուծման ուղիներ գտնելու նպատակով:

◆ Արմավիրի մարզային ենթահանձնաժողովը՝ մտախոզված լինելով մարզում անասունների մոտ բրուցելով հիվանդության տարածման վտանգով եւ Արմավիրի մարզպետարանի Անասնաբուժական տեսչության կողմից այդ վտանգի կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված միջոցների անբավարար մակարդակով, պատրաստել է նամակ է ուղարկել մարզի Անասնաբուժական տեսչություն՝ առաջարկելով ուժեղացնել հակաբրուցելու դեղամիջոցները եւ ավելի գործուն քայլեր ձեռնարկել՝ ներառյալ հակաբրուցելու դեղամիջոցների պատվաստումներ, հիվանդության տարածումը կանխելու նպատակով: Ենթահանձնաժողովը Անասնաբուժական տեսչությանն առաջարկել է նաեւ իր աջակցությունը պատվաստումների կազմակերպման եւ այդ նախաձեռնության մասին բնակչությանն իրազեկման գործում: